ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» «----------» 2021թ. N---- Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի «Երևան քաղաքի պատվավոր կոչումների և պարգևների մասին» N604-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) N1 հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 1.2. և 1.3. ենթակետերով.

«1.2) «Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալ».

«1.3) «Երևան» ոսկե հուշամեդալ»:

2) N1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 12.7-րդ, 12.8-րդ, 12.9-րդ, 12.10-րդ, 12.11-րդ, 12.12-րդ, 12.13-րդ, 12.14-րդ, 12.15-րդ, 12.16-րդ, 12.17-րդ, 12.18-րդ կետերով.

«12.7. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և օտարերկրյա պետությունների քաղաքացիները՝ Երևանի զարգացմանը նպաստելու և ակնառու հաջողությունների համար:

12.8. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալը շրջանաձև է՝ ուղղանկյուն կախիչով, հետևի մասում՝ ասեղային ամրակով: Դիմային մասի առաջին շրջագծում երիզված է «Էրեբունի Երևան 2800» բառերը: Երկրորդ շրջագծի կենտրոնում պատվանդանի վրա կանգնած, իշխանություն խորհրդանշող գավազանը բռնած թևավոր առյուծն է և երիզված է Հայաստանի 12 մայրաքաղաքները խորհրդանշող եռանկյունիներով: Ներքևի հատվածի կենտրոնում նշված է մ.թ.ա. 782՝ շրջապատված ձիթենու տերևներով: Կախիչն իրենից ներկայացնում է Էրեբունին խորհրդանշող սիմվոլ:

12.9. Հուշամեդալը պատրաստված է ոսկեպատ արույրից:

12.10. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով պարգևատրելու որոշումը կայացնում է Երևանի քաղաքապետը:

12.11. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալը և վկայագիրը հանդիսավոր պայմաններում պարգևատրված անձին հանձնում է Երևանի քաղաքապետը։

12.12. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով կրկնակի պարգևատրում չի կատարվում։

12.13. «Երևան» ոսկե հուշամեդալով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, ինչպես նաև կազմակերպությունները, ստեղծագործական և աշխատանքային կոլեկտիվները՝ Երևանի զարգացմանը նպաստելու և ակնառու հաջողությունների համար։

12.14. «Երևան» ոսկե հուշամեդալը շրջանաձև հուշամեդալ է, որի դիմային կողմը երիզված է Հայաստանի 12 մայրաքաղաքները խորհրդանշող եռանկյունիներով։ Երկրորդ շրջագծի կենտրոնում Երևանի քաղաքապետարանի շենքն է (2004թ.), որի հենքը գրտառությամբ պատվանդանի վրա կանգնած, իշխանություն խորհրդանշող գավազանը բռնած թևավոր առյուծն է, իսկ շենքի գլխավերևում համայն հայության սուրբ լեռ Արարատն է։ Հուշամեդալի հակառակ կողմում երիզված է եռալեզու (հայերեն, լատիներեն, ռուսերեն) գրտառության Երևան բառը։ Երկրորդ շրջագծի կենտրոնում պատկերված է սեպագիր արձանագրություն, որը հավաստում է Էրեբունի ամրոցում Սուսիի տաճարի հիմնադրումը (մ.թ.ա. 782թ.)։

12.15. Հուշամեդալը պատրաստված է ոսկեջրած արծաթից։

12.16. «Երևան» ոսկե հուշամեդալով պարգևատրելու որոշումը կայացնում է Երևանի քաղաքապետը։

12.17. «Երևան» ոսկե հուշամեդալը և վկայագիրը հանդիսավոր պայմաններում պարգևատրված անձին հանձնում է Երևանի քաղաքապետը։

12.18. «Երևան» ոսկե հուշամեդալով կրկնակի պարգևատրում չի կատարվում»։

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալը պատրաստվել է 2018 թվականին՝ որպես Երևանի հիմնադրման 2800-ամյակի խորհրդանշական հուշ: Հուշամեդալով պարգևատրումը նպատակ ունի բարձր գնահատանքի արժանացնել ՀՀ և օտարերկրյա պետությունների քաղաքացիներին՝ Երևան քաղաքի զարգացմանը նպաստելու և ակնառու հաջողությունների համար:

«Երևան» ոսկե հուշամեդալով պարգևատրումը նպատակ ունի բարձր գնահատանքի արժանացնել ՀՀ և օտարերկրյա պետությունների քաղաքացիներին, կազմակերպություններին, ստեղծագործական և աշխատանքային կոլեկտիվներին՝ Երևան քաղաքի զարգացմանը նպաստելու և ակնառու հաջողությունների համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ կատարել լրացումներ, որոնցով կկարգավորվեն Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալ և «Երևան» ոսկե հուշամեդալ շնորհելու հարաբերությունները և սկզբունքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Նշումներ
1.	ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալություն	1. «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) լրացվող կետերի և ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է շտկել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք **տեքստից բաժանվում են միջակետով**: Ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք **տեքստից բաժանվում են փակագծով:** Պարբերությունները համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է:
2.	ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության	2. Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետով լրացվող 1.2-րդ ենթակետում որպես հուշամեդալի անվանում նշված է **Երևանի 2800-ամյակի**, մինչդեռ Նախագծի 1-ին կետի 2-	Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է:

	գործակալություն	դդ ենթակետով լրացվող 12.7-րդ կետում Երևանի 2800-ամյակի հուշամեդալի նկարագրության մեջ նշվում է, որ հուշամեդալի վրա երիզված են լինելու **«Էրեբունի Երևան 2800»** բառերը: Այս առումով պարզաբանման կարիք ունեն վերոհիշյալ տարբերակման համար հիմք հանդիսացող հանգամանքները	
3.	ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալություն	3. Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման նախաբանում հղում է կատարված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ և 35-րդ կետերին, որոնց համաձայն՝ ավագանին տեղական ինքնակառավարմանը վերաբերող և օրենքով այլ մարմինների լիազորություններին չվերապահված հարցերի վերաբերյալ ընդունում է իրավական ակտեր, քաղաքապետի առաջարկությամբ որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին Երևանի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ. Այս առումով հարկ է անդրադառնալ հետևյալ իրավական կարգավորումներին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, համաձայն որոնց՝ ենթաօրենսդրական նորմատիվ **իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր:** ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու**	Առաջարկությունը չի ընդունվել: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ և 35-րդ կետերի համաձայն՝ ավագանին տեղական ինքնակառավարմանը վերաբերող և օրենքով այլ մարմինների լիազորություններին չվերապահված հարցերի վերաբերյալ ընդունում է իրավական ակտեր, քաղաքապետի առաջարկությամբ որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին Երևանի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ: «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար և ֆիզիկական անձինք (….) չեն կարող հիմնել շքանշաններ, իսկ նրանց հիմնած մեդալների կամ կրծքանշանների նմուշները չպետք է շփոթության աստիճանի նման լինեն Հայաստանի Հանրապետության շքանշաններին, մեդալներին և պատվավոր կոչման կրծքանշաններին:

		ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ Որոշման նախաբանում հիշատակված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետից չի բխում **Երևան ավագանու՝ պարգևներ շնորհելու հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ընդունման իրավասությունը:** Հետևաբար, ելնելով վերոգրյալից՝ Որոշման նախաբանում անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխան հղում կատարել այն իրավական ակտին, որից բխում է Երևանի ավագանու վերոհիշյալ լիազորությունը:	Նշված օրենքը լիազորություն է վերապահել տեղական ինքնակառավարման մարմիններին հիմնել մեդալներ կամ շքանշաններ, սակայն չի սահմանել, թե տեղական ինքնակառավարման որ մարմինը՝ ավագանին, թե համայնքի ղեկավարը նման լիազորություն ունի: Երևան քաղաքի ավագանին՝ նկատի ունենալով, որ մեդալ, հուշամեդալ հիմնելու լիազորությունը օրենքով այլ մարմինների լիազորություններին վերապահված չէ, 2013 թվականի փետրվարի 12-ի ընդունել է N 604-Ն որոշումը, որը նախատեսվում է լրացնել հուշամեդալի նոր 2 տեսակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ